

ԼՃԱՅԻՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ
ԱՐԻՎԵԼԻՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XIX—XX ԳԿ.)

Ա. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մեր մատենագրության մեջ Սևանա լիճը հիշատակվում է Գեղամա ծով, Գեղարքունի ծով և այլ անուններով, որն ըստ երևույթին արդյունք է նաև լճի երբեմնի առավել մեծ մակերես ունենալու հանգամանքի: Այն իրողությունը, որ լիճն ունի հրաբխային ծագում և գտնվում է ծովի մակերևույթից բավական բարձր, իր կնիքն է դրել լճի ֆաունայի վրա: Լիճ թափվող 29 գետերից ու գետակներից, որոնք վարար էին ոչ վաղ անցյալում, դարերի ընթացքում ձևավորվել են լճի նախնական ձկնատեսակները, քանի որ դրանք սկիզբ են առնում լիճը զոգավորող բարձունքներից, բացառությամբ 1924—1927 թթ. Լադոգա և Օճեգա լճերից բերված սիգի, որն արագորեն կլիմայավարժվեց և հաստատվեց Սևանա լճում:

Ինչպես հայտնի է, Գեղարքունիքի բնակչության հիմնական մասը եկել է 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններից, ինչպես նաև Պարսկահայքից: Հաստատվելով Սևանի ավազանում, ներգաղթած բնակչությունն ամենից առաջ հաշվի էր առել նոր բնակության վայրի ձկներով հարուստ լիճնեղու իրողությունը: Սևանի ավազանը ձկներով հարուստ իր գետերով և հատկապես լճերով (Սևան, Գիլի), իսկապես տասնամյակներ շարունակ փրկարար դեր խաղաց ներգաղթած բնակչության գոյապահպանման համար: Հաստատվելով նոր բնակության վայրում, արևմտահայության այդ հատվածի մի մասը, մեծ մասամբ առաջին անգամ շփվելով ձկնորսական զբաղմունքի հետ, հետագայում խիստ մասնագիտացավ դրանում և տարիների ու տասնամյակների ընթացքում մշակեց ինքնատիպ և այսօր էլ ուշադրության արժանի ձկնորսական եղանակներ¹:

Եռաժանի և ճիզակ— ձկնորսական այս գործիքները հայտնի են խշտ և խշտար անուններով, որոնք հավասարապես կիրառվել են գետային և լճային ձկնորսության մեջ: Այս որսաձևի ժամանակ նավակին կապում էին ձեռքի լապտեր², որը ձկների համար ծա-

¹ Աշխատանքը հիմնականում գրված է հեղինակի կողմից 1982—1985 թթ. Սևանի ավազանի մի շարք բնակավայրերից գրառված դաշտային ազգագրական նյութերի (այսուհետև՝ ԴԱՆ, տետրեր 1—4) և ոչ հարուստ գրավոր վկայությունների հիման վրա: Դրանց համաձայն, երբ հին բայագետիցները նոր էին հաստատվել Սևանի ավազանում, ձուկն այնքան առատ էր, որ գաղթականության առաջնորդ Մկրտիչ Արծրունին դրանից հրապտրված՝ գաղթականությանը հաստատել է Քյավառի ավերակներում (ներկայիս Կամո բաղաբ), հրաժարվելով Թբիլիսիի Կուկիա բարեկարգ թաղում բնակվելուց, որը նրան առաջարկել էին գաղթը կազմակերպողները՝ մշելով, որ «ձկնով էլ կարելի է ապրել» (տե՛ս Գ. Մինանյան, Իշխան ձուկը, «Գյուղատնտես», «Թիֆլիս, 1910, թիվ 26—27»):

Ըստ պահպանության, երբ առաջին վերաբնակիչները եկել են Սևանի ավազան և սայլերով անցել գետերը, ձուկն այնքան առատ է եղել, որ ջուրը կարմրել է սայլի անիվների տակ: Ջրի ալիքները ափ են նետել ձկների կույտեր, գետից ջուր վերցնելիս, ձըկները լցվել են բողոլների ու կծերի մեջ, գետից ձուկ են հանել մաղով ու սալայով, գետում բուրդ լվանալիս ձկներն ընկել են բրդի մեջ, արտերը ջրելիս՝ վխտացել մարգերում (ԴԱՆ, տետրեր 1—4):

² Ծառ հաճախ լապտերի փոխարեն շամպ են արել. նավթը լցնում էին ցանի վրա և այն խփելով երկաթե ձողին, այրում էին: Երբեմն սև մագուրը հալում էին, մեջը տորֆ գցում և ստացված ամուր զանգվածը խփում շշի վրա՝ կապելով մետաղալարով: Այս որսի ժամանակ ձկնորսները ձկներին մեկ-մեկ խշտկում էին, որից հետո ձուկը ձեռքով հանում էին խշտից և գցում նավակի մեջ (ԴԱՆ, տետր 1, Սևան):

ռայում էր որպես խայծ: Ձկները նկատելով լապտերի լույսը, լողում էին դեպի այն: Երբ երկիցքը աստղալից էր, այնև լապտերի կարիք չկար: Ձկները ջրի երես էին դուրս գալիս աստղերի լույսից զմայլված: Խշտով ձկնորսություն անելիս ձկնորսը հնարավորություն ուներ ընտրության կատարելու՝ խփելով առավել մեծ ձկների: Այս գործիքով հիմնականում որսում էին իշխան ձուկ: Խշտով ձկան որսը լճում արվում էր 5—8 ձկնորսներով, ոչ մեծ խորության վրա: Լճի ջրի մաքուր ու թափանցիկ լինելու շնորհիվ լույսով զմայլված և ջրի երես դուրս եկած ձկները շատ լավ երևում էին: Հենց այս պահն էլ օգտագործում էր ձկնորսը:

Գրավոր և դաշտային նյութերի վկայությամբ խշտով ձկնորսությունը Ֆատկապես տարածված էր Սևանի ավազանում բնակվող ռուս աղանդավորների շրջանում: Մի գիշերվա ընթացքում երկու խշտի օգտագործմամբ կարելի էր որսալ մինչև 200 խոշոր ձուկ³:

Չանգ— Լճային ձկնորսության բազմաթիվ եղանակներից առավել ինքնատիպը չանգով ձկնորսությունն է⁴, որը ազգագրական նյութերի վկայությամբ կիրառվել է Վարդեգնիսի շրջանի Կարճաղբյուր գյուղում: ձկնորսության այս ձևը պահպանվել է Կարճաղբյուրում մինչև 1950-ական թվականները: Որսամեկի վերաբերյալ բազմաթիվ ու հակասական տվյալները վկայում են⁵, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում ձկնորսական այս եղանակը կենցաղից դուրս մղվելու հետևանքով շատ մանրամասներ մոռացվել են: Չանգն ունի երեք կեռիկ մատներ⁶, որոնք կտրված և ձևավորված են մեկ ընդհանուր մետաղե հիմքից: Կեռիկներից երկուսը հավասար են և մի քիչ ցածր, իսկ մեջտեղիցը բարձր է ու երկար: Դա արվել է հետևյալ նկատառումներով. նախ, կեռը լիճը գցելիս շրճակի քիթ ու քերամի վրա, շուտ չգա ու աստի ջրի հատակում եղած մամուռներին ու խոտերին: Այնուհետև, շնորհիվ չանգի մեջտեղի բարձր մատի, չանգը գցելիս, ինչպիսի դիրքով էլ այն ընկնի ջրի մեջ, մինևույն է, գործիքը շրջվում է այնպես, որ երեք կեռերն ու հիմքին ամրացված ոսկորը կանգնում են վերև: Եվ վերջապես, մեջտեղի բարձր կեռը նախատեսված էր մեծ ձկների համար, իսկ միաժամանակ երեք կեռերում ընկած ձուկը դուրս գալ չէր կարող, մինչդեռ երկուսում բռնվածները, երբեմն չանգը դուրս քաշելիս, պոկվում էին կեռերից:

Չանգի երկաթե հիմքն ունենում էր 3,5 սմ. լայնք և մինչև կեռերի բաժանման հատվածը՝ 17 սմ. երկարություն: Դարբնոցում, կոման եղանակով, հիմքի մի ծայրում առանձնացնում են երեք կեռեր, որոնց ներքևի լայնքը հասնում է 11 սմ.-ի: Մեջտեղի մեծ մատն ունենում էր 23 սմ. երկարություն, իսկ կողքի երկու փոքր մատներից յուրաքանչյուրը՝ 18 սմ.: Մետաղե հիմքի վրա՝ մեծ մատի հատվածում, որն ընկնում է երկաթե հիմքի կենտրոնում, արվում էր փոքր անցք, որի շնորհիվ ոսկորի լայն մասը կապում են հիմքին: Երկաթե հիմքին կապվող ոսկորը պատրաստում էին խոշոր կամ մանր եղջերավոր անասունի թիակներից⁷: Այն լավ մաքրում էին, տալիս համաչափ տեսք, հարմարեցնելով չանգի երկաթե հիմքին: Չանգի հիմքից մտցնում էին մետաղալար կամ կաշվե սրեն և կապ տալիս հիմքի մյուս երեսում: Դրա շնորհիվ ոսկորի մի ծայրը հուսալիորեն ամրացվում էր երկաթե հիմքին: Չանգի երկաթե հիմքի մյուս գլխում ևս անցք էին անում, որից անցկացնում էին դաբաղած կաշվի լայն սրեն, այն մտցնում էին ոսկորի մյուս վերջավորությունում արված անցքից և կապում սրենի ծայրերը: Դրա շնորհիվ ստացվում էր օղակ, որից և կապում էին չանգի թելը, որը ստանում էին կանեփից կամ բամբակից: Թելի ծայրին կապում էին ամուր փայտ՝ ինչպես չանգը նետելու, այնպես էլ, առավել ևս, ձուկը կեռերում ընկնելուց հետո գործիքը լճից դուրս քաշելու համար:

³ А. Оверин, Несколько слов о ловле и сушке рыб на гокчайском озере, «Нав-казский календарь» на 1858, Тифлис, 1857, стр. 113.

⁴ Այս անունը, հավանաբար, գործիքին տրվել է մետաղե հիմքին ամրացված երեք կեռիկների պատճառով, որոնք թողնում են չանգի տպավորություն:

⁵ Բարեբախտաբար Կարճաղբյուր գյուղում պահպանվել էր չանգի մի եզակի օրինակ, որը ճշտեց տարբեր բանասացների հաղորդած իրարամերձ կարծիքները (ԴԱՆ, տետր 4, Վարդեգնիսի շրջան, Կարճաղբյուր):

⁶ Ազգագրական նյութերը վկայում են, որ Կարճաղբյուր գյուղում կիրառվել է նաև երկու մատներից բաղկացած չանգ, որը հավանաբար այդ գործիքի նախնական տիպը պետք է համարել: Երբ այն գցում էին լիճը, մեջտեղի երրորդ մատի բացակայության պատճառով չանգն ընկնում էր բերնիվայր՝ կառչելով որևէ բանից: Նման դեպքում մրտնում էին ջուրը և ուղղում չանգը: Երեք մատներ ունեցող չանգի դեպքում դրա անհրաժեշտությունը չկար (նույն տեղում):

⁷ Որոշ նյութերի վկայությամբ չանգի երկաթե հիմքի վրա կապել են նաև խոշոր եղջերավոր անասունի ճակատի մշակված լայն ոսկորը:

Չանգի վրա ամրացված ոսկորը դրվում էր հիմնականում մի նպատակով, որ ջրի մեջ գցված գործիքը ոսկորի փայլի շնորհիվ հեռվից հրապուրեր ձկներին:

Չանգի հիմքի վերջին մասից ամրացված պարանից 1,5—2 մ. հաշված փաթաթում էին արճիճե բարակ թիթեղ-ծանրոցներ: Դրանք դրվում էին երեք տեղերում, յուրաքանչյուր կես մետրի վրա մեկ հատ⁹: Արճիճեների ծանրության շնորհիվ չանգի թելը նստում էր լճի հատակին, որպեսզի ձուկը չկարողանար թելի տակով անցնել, այն պետք է անպայման անցներ թելի վրայով, հակառակ պարագայում չանգով ձուկ որսալն անհնարին կլիներ: Չանգով առավելապես ձուկ էին որսում Կարճաղբյուրի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող և Սևանա լճին հարող մոտ 10 մ. բարձրություն ունեցող բլրի վրա կանգնած, որը հայտնի է չանգի պալ աճուճով¹⁰:

Ջկնորսը, կանգնելով Չանգի պալին, չանգի պարանը օղակաձև հավաքում էր մի ձեռքին, իսկ մյուսում պահում չանգը: Այնուհետև մի քիչ կուսում էր, պարանը պտտեցնում օղում և նետում լճի մեջ: Գործիքն իջնում էր ջրի մեջ 6—7 մ. խորությամբ և նրանում հատակին: Ջկնորսը ուշադրությամբ նայում էր գործիքին, որը ջրի պարզության, ինչպես նաև չանգի վրա կապված ոսկորի շնորհիվ, շատ լավ երևում էր: Երբ ձուկն անցնում էր պարանի վրայով, ձկնորսը մեծ արագությամբ և ակնթաթորեց դեպի իրեն էր ձգում պարանի ծայրին կապած փայտը¹⁰: Արագ քաշելու շնորհիվ չանգի կեռերը խրվում էին ձկան կողերի մեջ, և ձկնորսը ջրից դուրս էր քաշում չանգը: Սակայն, որպեսզի ձուկն ընկներ կեռերի մեջ, պետք է անպայման անցներ հատակին փոված պարանի առավել հարմար տեղով: Ազգագրական նյութերի վկայությամբ չանգի հիմքից կապած պարանի սկզբից մինչև 50—60 սմ.-ի վրա եղած հատվածը բոլորից հարմար տեղն էր պարանի վրայով անցնելու պահն օգտագործելու համար: Այդ հատվածով անցնող ձուկն անպայման որսվում էր: Հակառակ պարագայում տարածությունը մեծ կլիներ և ինչպիսի արագությամբ ու հմտությամբ էլ չանգը քաշեին, հնարավոր չէր լինի բռնել: Եթե ձուկը չանգի հիմքին շատ մոտ լիներ, ապա նույնպես հնարավոր չէր լինի որսալ, որովհետև կարճ տարածության վրա հարվածի մեծ ուժով պարանի վրայով անցնող ձկանը խփել հնարավոր չէր:

Չանգը զցում էին ձկների խաղի տեղերում, այնտեղ, որտեղ ձուկը ձվադրում էր և մի փոսից անցնում մյուսը: Չանգով ձկնորսությունն առավել արդյունավետ էր արևածագին ու երեկոյան ժամերին, երբ արևը թույլ էր և թեքվում էր մայրամուտ:

Դաշտային նյութերի վկայությամբ չանգով ձուկ են որսացել նաև ձմռանը սառած լճի մեջ: Իմանալով ձկների խաղի վայրերը, դրա վրա բացում էին ոչ մեծ չափի առաջին անցքը: Դրանից հետո առաջին անցքից 6—7 մ. հեռավորության վրա բացում էին երկրորդ նմանատիպ անցքը: Երբ երկու անցքերը պատրաստ էին, չանգի պարանը ամրացնում էին 8—10 մ. երկարությամբ փայտի (գոլայի) վրա և մի անցքից այն զցում էին մյուսի կողմը, որտեղից էլ չանգն իջնում էր լճի հատակը: Ջկնորսներից մեկը մնում էր առաջին անցքի մոտ, չանգի գլուխն ձեռքում պատրաստ պահած, իսկ մյուսը՝ երկրորդ

⁹ Արճիճե բարակ թիթեղը մի քանի անգամ փաթաթում էին թելի վրա, որի շնորհիվ շուրջ 4—5 մետրի վրա թելը ծանրանում էր և նստում ջրի հատակին, որից հետո այն աստիճանաբար ձգվում էր դեպի բարձունքը կանգնած ձկնորսը: Արճիճի բացակայության դեպքում բարակ ու երկար քարերը մի քիչ խարտում էին ու կապում չանգի թելով՝ որպես ծանրոց:

¹⁰ Չանգի պալ աճուճը բանասացների վկայությամբ օգտագործել են իրենց ծնողներն ու պապերը: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ որսաձևը գոյություն է ունեցել Կարճաղբյուրում 1850-ական թվականներից: Չնայած ջրի մակարդակն իջնելու հետևանքով նախկին քարափի շրջանում լիճը բավական հեռացել է, իսկ որսաձևը վերջին երեք տասնամյակներում մոտացության տրվել, այդուհանդերձ այսօր ևս այս տեղանունը օգտագործվում է: Դա մատնանշում է այդ որսաձևի հետ կապված երթմանի ավանդույթների կենսունակության մասին: Չանգով ձկնորսությունը իրենց հետ բերել են Կարճաղբյուրի հիմնադիրները, թե տեղում է ստեղծվել, դժվար է ասել: Փաստ է միայն, որ ողջ Սևանի ավազանում Կարճաղբյուրը միակ վայրն է, ուր եղել է չանգով ձկնորսություն:

¹⁰ Երբեմն չանգով ձուկ էին որսում երկուսով: Մեկը չանգն էր զցում, իսկ մյուսը կանգնում Չանգի պալի ստորին հատվածում, լճին ավելի մոտիկ և դիտում ջրի մեջ ընկած գործիքը: Երբ ձուկը լողում էր դեպի չանգը և ուզում անցնել չանգի պարանի վրայով, ներքևում կանգնածը, որը մեծմասամբ լինում էր մանկահասակ տղա, կանչում էր վերևում կանգնած չանգ զցողիճ՝ գգուշ, գգուշ, ապա, քաշա: Ես դեպի վեր էր ձգում չանգի թելին կապած փայտը, ուժեղ հարվածով չանգի կեռերը բռնում էին ձուկը: Չանգով ձկնորսությունը պահանջում էր մեծ հմտություն և պահն օգտագործելու ճարակություն:

անցքի մոտ: Սա գլխիմ մի շորի կտոր էր գցում, կոանում փորված անցքի վրա և նայում լճի հատակին նստած չանգին: Դրա շնորհիվ բավական լավ է երևում լճի հատակին ընկած չանգն ու պարանը: Երբ ձուկը խեծնում էր պարանին և մտնում այն հատվածին, որն առավել նպաստավոր էր ձկան որսի համար, երկրորդ անցքի մոտ նստած մարդը, համաձայն պայմանավորվածության, բարձրացնում էր ոտքը: Դա նշանակում էր, որ կարելի է գոլեն ուծել ձգել, և առաջին անցքի մոտ նստածը, քաշելով պարանը, չանգի կեռերը մտցնում էր ձկան կողերի մեջ: Այնուհետև, արագ քաշելով պարանը, չանգը դուրս էր հանում առաջին անցքից, կեռերից պոկում որսած ձուկը և նորից գործիքը գցում լիճը:

Ինչպես կառուցվածքով, այնպես էլ գործածության ձևերով վերոհիշյալ երկու որսա-ձևերը փաստորեն կրկնում են իրար: Միայն տուգլի գոլայի ձես կապված որսաձևը բավական հմտորեն հարմարեցված է լճի առած ժամանակ ձուկ որսալուն: Դա պետք է համարել ավելի ուշ շրջանի մտահղացում, որը նույնպես բնորոշ է եղել Կարճաղբյուր գյուղին:

Լճի կամ պարանի չանգալ (կեռ)— Ձկնորսական այս գործիքն այսօր թուրքովից մոռացության է տրվել Գեղարքունիքում և մինչև իսկ չի հիշվում տարեց բնակչության շրջանում: Հիմնական աղբյուրը մնում է Ա. Օվերիհի շատ շահեկան ուսումնասիրությունը: Հեղինակը նման որսաձևի հանդիպել է առաջին անգամ և, բնականաբար, տվել է դրա մանրամասն կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքները: «Ձկան որսի այս եղանակի մասին ես չգիտեի,— գրել է նա,— չէի հանդիպել, տեղում առաջին անգամ լսեցի դրա մասին: Կարծում եմ մեզ մոտ այն անհայտ է, ուստի և նկարագրում եմ մանրամասնորեն»¹¹:

Լճի կամ պարանի կեռն ունի երեք կամ հինգ երկաթե ելուստներ, որոնք վարսվում են կոնաձև հիմքի վրա: Որպեսզի քողարկեն այդ ելուստ-կեռիկները, փայտե կոնաձև հիմքին ամրացնում էին սագի սպիտակ փետուրներ: Դրանց շնորհիվ մետաղյա կեռերը դառնում էին անտեսանելի: Միաժամանակ, սպիտակ փետուրները ձկների համար ծառայում էին որպես խայծ: Լճի կեռի կոթոնի վրա անց էին բացում, որից կախում էին 15—20 մ. երկարությամբ պարանը: Ձուկ որսալու նպատակով կեռը ափից նետում էին ջուրը՝ պարանի ընձեռած հնարավորության անհամեմատ:

Լճի կեռը այնքան էլ արտադրողական չէր, լավագույն դեպքում դրանով օրական կարելի էր որսալ 40 ձուկ: Սակայն, այն հանգամանքը, որ այս գործիքը բավական էժան էր և մեծ ծախսեր չէր պահանջում, ուստի շատ լայն գործածություն ուներ: Ըստ Ա. Օվերիհի հաղորդման, լճի կեռով ձկնորսություն էին անում հայերը¹²:

Ծիծեռ— Ազգագրական նյութերի վկայությամբ, այս գործիքը Սևանի ավազան է թերվել Ռուսաստանից՝ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Ծիծեռի կառուցվածքը բավական պարզունակ է. մետաղից պատրաստած սրտաձև փայլախայծի երկու ծայրերին մեկական անցքեր են արված: Ծայրերից մեկը ավելի լայն է, որի անցքից կախում են միևնույն հիմքից ամրացված երեք կամ հինգ կեռիկներ, որոնք ունեն ճիշտ այնպիսի ելուստներ, որպիսիք բնորոշ են ձկնորսական կարթին: Փայլախայծի մյուս ծայրը ավելի սուր է, որի անցքի մեջ հագցվում է մի օղակ, իսկ օղակից կապվում է 20—30 մ. երկարությամբ կապրոնե թելը: Փայլախայծն իր թելով փաթաթվում է մի փայտի կտորի վրա: Փայտի մի ծայրը մինչև հաշաձև ելուստը ավելի երկար է լինում, այն հաշվով, որ տեղավորվի ձեռքի ափի մեջ, իսկ փայտի մյուս ծայրից կախվում է երկաթե օղակ, որի անցքից մտցնում են ծիծեռի կապրոնե թելը: Որպեսզի փայտի հիմքին փաթաթած ծիծեռի թելը չքանդվի, փայլախայծի կեռիկներից մեկը մտցնում են փայտի մեջ, իսկ մյուս կեռիկները լաթի կտորով փաթաթում դրա վրա: Ձուկ որսալու համար արձակում են լաթի կտորը, փայտի միջից հանում կեռիկի ծայրը և թելը մի քիչ թուլացնելով, բոլոր կեռիկների ծայրերին խփում Կն անճրևաորդի ոչ մեծ կտորներ: Այնուհետև, փայլախայծը գեցում են ջուրը, ձեռքով անընդհատ շարժում ծիծեռի փայտի մասը, որի ձեսանքով թելը քանդվում է, և փայլախայծն իջնում ջրի մեջ¹³:

Ամենայն հավանականությամբ ներմուծված ծիծեռը եկավ փոխարինելու լճի կեռին: Վերջինին համեմատ, այն ավելի պարզ էր, դիմացկուն ու արդյունավետ, կեռիկները քողարկելու անհրաժեշտություն չկար, քանի որ փայլախայծը իրեն էր ձգում ձկներից:

Այսպիսով, ակնհայտ է, որ հանրահայտ փայլախայծի առավել պարզունակ տեսակը դեռևս 19-րդ դարի 50-ական թթ. ծանր էր եղել Սևանի ավազանի բնակչությանը: Այդ գործիքը Արևմտյան Հայաստանից թերվեց, թե ստեղծվեց նոր բնակչության վայրում հա-

¹¹ А. Оверин, Сзл. азг., էջ 341:

¹² Նույն տեղում:

¹³ ԴԱՆ, տետր 2, Կամ:

տատված բնակչության կողմից կամ փոխառնվեց, դժվար է ասել: Մի բան անվիճելի է, որ Գեղարքունիքի հայ բնակչությունը ծանոթ է եղել մեր օրերում դեռևս կիրառվող փայլախայծի նախատիպը համարվող լճի կեռին:

Կարթավոր ուռկամ— Այս գործիքի մասին միակ աղբյուրը նույնպես Ա. Օվերիճի ուսումնասիրությունն է: Նրա վկայությամբ Սևանա լճում կարթավոր ուռկամով ձկնորսություն էին անում հատկապես ավազանում ծառայող զինվորականները, որոնք առիթը բաց չէին թողնում թարմ ձուկ որսալու¹⁴:

Կարթավոր ուռկամի կառուցվածքը բավական պարզ էր, մեծ ծախսեր չէր պահանջում և մատչելի էր ցանկացած անհատի համար: Այն ուներ կշեռքի տեսք, որի երկարությունը հասնում էր 23 մետրի: Պարանի ոչ հաստ հիմքի վրա կապում էին մոտ մեկ մետր երկարությամբ կիթառի մի քանի լարեր կամ ուղղակի ամուր թելեր, որոնք հիմքի երկու կողմերից ձգվում էին մոտավորապես կես մետր: Այդ ամուր թելից կապում էին մետաղալարե կեռիկներ, որոնք պատրաստում էին տեղում: «Միայն ինձ չհաջողվեց նկատել, — գրել է Ա. Օվերիճը, — թե ձկների համար որպես խայծ ինչ են խփում կեռիկների ծայրերին»¹⁵:

Կարթավոր ուռկամի հիմքի պարանի մի ծայրից կախում էին ծանր քարեր, որպեսզի գործիքը սուզվեր ջրի մեջ, իսկ մյուս ծայրին՝ թելը, որը թողնում էին ափին: Ձուկ որսալու համար հիմքի մի ծայրը, որից ծանրոց էր կախված, նետում էին լիճն այնքան հեռու, ինչքան կբավարարեր թելը, իսկ մյուս ծայրը կապում էին ափին եղած քարից կամ ցցից: Դա արվում էր այն նպատակով, որ երբ ծանրաքարերը կարթավոր ուռկամը իջեցնում էին ջրի մեջ, մյուս ծայրը մնար ափում, հակառակ պարագայում այն կիջներ լճի հատակը:

Դժվար չէ նկատել, որ կարթավոր ուռկամը ոչ այլ ինչ է, քան լճի կեռի բարդեցված ու կատարելագործված եղանակը, որի արդյունավետությունը անհամեմատ ավելի մեծ էր: Եթե լճի կեռը, ինչպես նաև սովորական ձկնորսական կարթը, ունենում էր 1—5 ելուստներ, ապա կարթավոր ուռկամը՝ կրկնակի անգամ ավելի: Մյուս կողմից, այդ ելուստները կապված էին լարերից, որոնք զբաղեցնում էին մի քանի քառակուսի մետր մակերես, որը նույնպես նպաստում էր ձկնորսության հաջողությանը:

Ցանց— Գրավոր և դաշտային նյութերի վկայությամբ Սևանա լճում օգտագործել են ցանցերի երկու տեսակ՝ դրվող և նետվող: Սակայն գրավոր նյութերում ոչ միայն պակասում է այդ ցանցերի կառուցվածքի ու աշխատանքի եղանակների նկարագրությունը, այլև, շատ հաճախ, դրանք շփոթել են ուռկամի հետ: Պետք է ասել, որ այս շփոթը սուկ հայ իրականությանը չի վերաբերում: Ընդհանրապես, մասնագիտական գրականության մեջ հաճախ են շփոթում ուռկամ և ցանց գործիքները: Մինչդեռ, դրանք ունենալով որոշ նմանություններ, միաժամանակ խստորեն տարբերվում են ինչպես կառուցվածքով ու չափերով, այնպես էլ գործածության սկզբունքներով: Ցանցով ձկնորսության ժամանակ ձկները բռնվում են ցանցի օղակներում կամ պարզապես դրանցում խճճվում: Մինչդեռ, ուռկամով ձկնորսություն անելիս, դա լինել չի կարող, քանի որ ուռկամի թելերը հաստ են, օղակներն ավելի փոքր, և բնականաբար, ձուկը ոչ թե բռնվում է ինչ-որ տեղից, ինչպես ցանցում, այլ պարզապես ընկնում է ուռկամի մեջ¹⁶:

ա) **Դրվող կամ կանգնեցվող ցանց**¹⁷— Այն ունենում էր 75 մ. երկարություն, 7—8 մ. լայնություն, իսկ օղակների անցքերը լինում էին 5 սմ.: Որպեսզի այն ուղիղ դիրքով կանգներ ջրի մեջ ինչպես պատենջ, ցանցի վերևի մասում կապում էին փայտախցաններ, իսկ ներքևի մասում՝ ծանրոցներ: Գրավոր նյութերի վկայությամբ 19-րդ դարի առաջին կեսերին որպես փայտե խցան օգտագործել են անասունի փչած ստամոքսն ու միզափամփուշը, սինչև իսկ տկեր, տակառներ և այլն¹⁸: Ավելի ուշ վերջիններիս փոխարինելու եկան տարբեր տեսակի ծառերի կեռներից պատրաստած արհեստական խցանները, որոնք

¹⁴ St'u A. Оверин, *Աշխ.*, էջ 341:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ St'u A. Смоляк. Традиционное хозяйство и материальная культура народов Нижнего Амура и Сахалина. М. 1984. էջ 13:

¹⁷ Գեղարքունիքում դրվող ցանցերին տալիս են **թակարդ (տուգախ)** անունը: Այդ բնորոշումը լիարժեք արտահայտում է ցանցի գործառնությունը: ձկնորսության մեջ ցանցն իսկապես հանդես է գալիս որպես թակարդ, ջրի մեջ կանգնեցրած ուղիղ պատ, որի օղակներում բռնվում են ձկները: Ամենայն հավանականությամբ դրվող ցանցերով ձկան որսը Գեղարքունիքի բնակչությունը սովորել է ավազանի ռուս աղանդավորներից (ԳԱՆ, տեսր 3, Մարտունի):

¹⁸ St'u B. Петров, Рыболовство на Севанском озере. «Экономический вестник Арменция», Ереван, 1924, № 1, էջ 8;

Սևանի ավազան էին բերվում Դիլիջանից: Որպես ցանցից կախվող ծանրոցներ օգտագործում էին ուղղանկյուն կամ շառանկյուն տափակ քարերը, իսկ ավելի ուշ շրջանում՝ 200—300 գրամ քաշ ունեցող երկաթե օղակները: Որպեսզի քարերը պարանոց չարձակվեին, դրանք երկու կողմից խարտում էին, ստեղծելով որոշ խորությամբ կտրվածք, որից գցում էին պարանը և կապում ցանցից¹⁹: Սակայն, քարե ծանրոցները այնքան էլ հարմար չէին, երբեմն պարանն արձակվում էր, քարն ընկնում, որի պատճառով ցանցը նկատելի կերպով տեղից շարժվում էր: Մինչդեռ երկաթե օղակները հարմար էին դրվող ցանցերի համար: 1980—1970-ական թթ. քարե ծանրոցները հիմնականում տեղի տվեցին՝ փոխարինելով երկաթե օղակ ծանրոցներով, որոնք պատրաստում էին տեղի դարբնոցներում:

Որպեսզի լճում ցանցը երևար, ցանցի պարանի երկու գուլաներին ամրացնում էին մեկական **ճշան** (քալթեր)²⁰: Պարանի երկարությունը կախված էր լճի խորությունից: Այն սովորաբար ունենում էր 25—30 մ. երկարություն: Նշանին կապված պարանի մյուս ծայրին կապում էին մեծ քաշի ծանրոցներ, որոնց շնորհիվ ցանցը պետք է մնար տեղում և շշարժվեր: 1950-ական թթ. այս ծանրոցները փոխարինվեցին օգտագործումից դուրս եկած տրակտորների շարժիչներով: Դրանք քավական ծանր են, մետաղալարե պարաններով իջեցվում են լճի հատակը և հուսալի են դրվող ցանցը տեղում պահելու համար: Ծանրոցների և փայտախցանների հավասարակշռության շնորհիվ ցանցը ուղիղ դիրքով կանգնում է ջրի մեջ:

Հաճախ իրար են կապում 8—12 ցանցեր և գցում լիճը, որն այս որսաձևի առավել արդյունավետ և կատարելագործված եղանակը պետք է համարել: Սովորաբար դրված ցանցը լճում մնում էր կես օր, այն գցում էին երեկոյան և հանում առավոտյան²¹:

բ) **Լճային նետվող ցանց**— Գրավոր նյութերում ձկնորսական այս գործիքի կառուցվածքն ու աշխատանքի եղանակները լիովին բացակայում են: Մասնագիտական գրականության մեջ այն սուկ հիշատակվում է որպես ձկնորսական արգելված գործիք, որով ձկների առանձին տեսակների անվնաս որս էր կատարվում²²: Ազգագրական դաշտային նյութերն ինչ-որ չափով լրացնում են գրավոր վկայությունների այդ պակասը և թույլ են տալիս վերականգնելու նետվող ցանցերի կառուցվածքն ու գործածության սկզբունքները²³:

Ասեմք, որ Գեղարքունիքում լճային նետվող ցանցը հայտնի է ակլատիզ անունով²⁴, որն ի տարբերություն դրվող ցանցի, ոչ թե իջնում է ջրի մեջ և պատնեշի մասն կանգնում, այլ մնում է ջրի երեսին: Ակլատիզ ցանցից կապում էին թեթև ծանրոցներ, ինչպես նաև փայտե խցաններ: Դա արվում էր այն հաշվով, որ ցանցը չընկնվեր, այլ մնար լճի մակերեսին: Ակլատիզ ցանցի գլխի նշաններն ավելի մեծ էին արվում, քան դրվող ցանցերինը, որպեսզի մյուս փայտախցանների հետ մեկտեղ ցանցը պահեին ջրի վրա: Այդ գործիքի ծանրոցները գցվում էին միայն մի գլխից: Նման կառուցվածքի շնորհիվ ակլատիզ ցանցը մնում էր ջրի երեսին: Դրա անցքերը շատ ավելի մանր էին, քան դրվող ցանցերինը, և հիմնականում նախատեսված էր իշխան ձկան որսի համար: Ձուկը ջրի մակերեսով լողալով մտնեցնում էր ցանցին և որևէ տեղից բռնվում:

Ցանցավոր ուռկան— Լճային ձկնորսության մեջ այս որսաձևն աննշան փոփոխություններով կիրառվում է նաև մեր օրերում: Մինչև մեր դարի 20-ական թթ. վերջերը Սևանա լճում կիրառվող ձկնորսական ուռկանները իրենց կառուցվածքով ու արդյունավետությամբ խիստ տարբեր էին: Չկար ուռկանների օղակների որոշակի չափ, դրանք պատրաստում էին տարբեր հունքից՝ գործելու տնայնագործական բազմազան եղանակներով: Բանի որ

¹⁹ Սևանա լճի շրջանում տարբեր ժամանակներում հնագիտական պեղումներից գտնվել են քարե խարիսխ-ծանրոցներ, որոնց ձկնորսները ծակ քարեր անունն են տալիս: Դրանց որոշ նմուշներ պահվում են ՀՊՊ թանգարանում: Դրանք ունեն 3—4 կգ. քաշ, լավ մշակված են և ողորկ, քարերի վրա արված է քավական լայն անցք, որից պարան են կապել: Այդ քարե ծանրոցները կիրառվել են ձկնորսության մեջ՝ որպես նավակի խարիսխ (ԴԱՆ, տետրեր 1—4):

²⁰ **Քալթեր-ճշանը** պատրաստում են արհեստական խցանից, այն լինում է «երկհարկ»: 70—80 սմ. բարձրություն ունեցող այդ ճշանը ոչ միայն լավ երևում է լճում, այլև մյուս ծայրի ճշանի և ցանցից կախվող փայտախցանների հետ մեկտեղ ցանցը պահում է ուղիղ դիրքով, և թույլ չի տալիս, որ ծանրոցները այն իջեցնեն լճի հատակը (ԴԱՆ, տետր 3, Մարտունի):

²¹ Ոչ մեծ չափի ցանցի վրա աշխատում էին չորս մարդ, մեկը թիակն էր գցում, մյուս երեքը ծանրոցներն ու տոպրակներն էին քաշում-հանում:

²² Տե՛ս **B. Петров**, ճշվ. աշխ., էջ 11:

²³ ԴԱՆ, տետր 3, Մարտունի:

²⁴ Հավանաբար այդ անունը պայմանավորված է գործիքի՝ հնարավորին չափ ձկներին իր օղակներում խճճելու, տզի մասն կաշելու հատկությամբ:

ամեն ձկնորս կամ ձկնորսական ընկերություն, որին լինը կամ դրա մի տեղամասը տրվում էր կապալով, կիրառում էր ուռկան գործելու իր հնարավոր միջոցները, բնականաբար, դրանք խիստ խայտաբղետ էին: Ուռկան էին գործում բամբակի, վուշի, կանեփի թելերից, որոնք ավելի ուշ փոխարինվեցին արհեստական թելերով²⁵:

Ցանցավոր ուռկանը բաղկացած էր ցանցից, դրա մեջտեղն ամրացվող ուռկան-տոպրակից (**խազիհնե**)²⁶ և ցանցից կախվող երկու օղապարաններից: Ուռկանի ցանցի վերևի մասում, որպես փայտե խցան, մեկ մետր կամ ավելի կարճ երկարություն ունեցող պարանով կապում էին դրվող ցանցով կիրառված հնարների նման: Ուռկանի երկարությամբ մի կողմից կախում են կապարե գնդակներ (**արճիհ**), որոնք ուռկանը ձգում են լճի հատակը: Սակայն ցանցի վերևի կողմից ամրացված տարբեր տեսակի լողանցները պահում են ցանցն ու ուռկանը և թույլ չեն տալիս, որ դրանք իջնեն լճի հատակը: Ուռկանը ջրի մեջ մնում է հավասարակշռված և թեքությամբ:

Մեծ ուռկանով որս կատարելիս թոռի վրա կապում էին հինգ տակաոներ՝ յուրաքանչյուրը 10 կգ. ծանրությամբ, որոնք մնում էին ջրի երեսին: Առաջին և հինգերորդ տակաոները կոչվում էին կլաշի թռչկաներ, երկրորդը և չորրորդը՝ օրթի թռչկաներ, մեջտեղի՝ **խազիհնե** թռչկա²⁷: Ուռկանով ձկան որսը կատարվում էր հետևյալ կերպ. ուռկանը ցանցով ու երկու օղապարաններով դնում էին նավակի մեջ: Օղապարանի մի ծայրը ընկած էր լինում ուռկանի տակ, իսկ մյուսը դրված էր լինում նավակի քթին: Երբ նավակն սկսում էր ասից հեռանալ, նավակի վրա դրված պարանի ծայրը տալիս էին ասիում կանգնած ձկնորսի ձեռքը: Նավակը շարժվում էր, լճում այդ օղապարանը փոելուց հետո (500 մ. ցանցի դեպքում օղապարանն ունենում էր 1000 մ. երկարություն) նավակը հորիզոնական դիրքով շրջադարձ էր կատարում դեպի ասի, և ջուրն էր նետվում մյուս օղապարանը: Երբ օղապարանը փոելով նավակը ասի էր հասնում, արդեն երկու օղապարանների ծայրերը ասիում էին, և կարելի էր ուռկանը քաշել: Յուրաքանչյուր օղապարանին 10 մարդ մեջքներից կապած պարանների միջոցով ուռկանը քաշում էին դեպի ասի: Պարանները պետք է քաշելին միածամանակ և հավասար, որ տոպրակում լցված ձկները նորից ջուրը չթափվեին: Պարանները քաշելիս ոտքերով կանգնում էին դրանց վրա, որպեսզի հնարավորին չափ դրանք սեղմվեին գետնին, որ ձկները տակից չկարողանային անցնել²⁸:

Ուռկանի օղապարանները քաշելը չափազանց դժվարին աշխատանք էր: Լավ որսի դեպքում մեկ ուռկանի տոպրակից հանում էին 5—10 տոննա ձուկ: Այս եղանակով որսած ձկները լցվելով խազիհնե մեջկենդանի էին մնում, որի շնորհիվ պահպանում էին իրենց համային հատկությունները²⁹:

Անջարձ ուռկան (նևող)— Այս որսածնը համարվում է Սևանա լճում գոյություն ունեցած ձկնորսական եղանակներից ամենից արդյունավետը, որն իր բարդ կառուցվածքով, հնարամիտ մտահղացումներով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում³⁰:

²⁵ 1930-ական թթ. սկսած, արհեստական թելերից գործած պատրաստի ուռկանների մուտքը Գեղարքունիք խիստ նեղացրին այս բնագավառի տնայնագործության շրջանակները: Նույն շրջանում իրենց կառուցվածքով ու գործածությամբ առանձնանում էին Սևանի ալազանի ռուս աղանդավորների օգտագործած ուռկանները, որոնք հայտնի են **սառառուցի թոռ** անունով: Դրանք նման էին ուռենու ճյուղերից հյուսված ձկնորսական թարփին, որոնց վերջին ծայրը թարփի նման կապվում էր, և ներս ընկած ձուկն այլևս դուրս գալ չէր կարող:

²⁶ Տոպրակ-խազիհեն ցանցից կապում էին խո:րջինի նման (ԴԱՆ, տետր 1, Սևան):

²⁷ ԴԱՆ, տետր 3, Մարտունի:

²⁸ Օղապարանի վրա կանգնելու պահը անվանում էին **պատրեց գնա**: Երբ ուռկանից ձուկը հանում էին, երեխաները շրջապատում էին թոռը: Ձկնորսները երեխաների կողմն մանր ձկներ էին գցում: Դրան ասում էին **անգջ կլա**, այսինքն՝ ով ճարպիկ է, թող վերցնի (ԴԱՆ, տետր 3, Մարտունի):

Ինչպես տնտեսական մյուս զբաղմունքներում, ձկնորսության մեջ ևս անպակաս են եղել այդ բնագավառով պայմանավորված կատակ-փոործությունները, որոնց նպատակն էր ստուգելու նոր մասնագիտացող ձկնորսների հմտությունները: Գրավոր նյութերի վկայությամբ Նորադուզում երբ թողը գցում էին, մտածված կերպով իրենց պարանները (**ջաշիչները**) բաց էին թողնում, և գործին անծանոթ ձկնորսներն ընկնելով ծովը, քիչ էր մնում խեղդվելին: Մեկ ուրիշ տեղ աշխատանքից անտեղյակ մարդուն տակառ էին փչել տալիս կամ շալակը մեծ քար էին տալիս, որպես թոռ սրիկի (տե՛ս «Ձկնորս բանվոր», 1928, թիվ 7):

²⁹ Ներկայումս օղապարանները քաշում են երկու տրակտորներով, որոնք կատարում են նախկին 2՝ ուռկանավարների աշխատանքը (ԴԱՆ, տետրեր 1—4):

³⁰ Լճային ձկնորսական այս եղանակի մասին չունենք գրավոր որևէ աշխատանք,

Ափից դեպի լիճը փոփում էր 500 մ. երկարությամբ մետաղալար, որի երկու ծայրերից կախվում էին ծանրոցներ: Ակզբնական շրջանում որպես ծանրոց օգտագործել են խարիսխի տարբեր տեսակներ, իսկ վերջին շրջանում՝ տրակտորի 500—600 կգ. քաշ ունեցող շարժիչներ: Մետաղալարը փռելուց հետո կանգնեցնում էին փայտե սյուներ՝ յուրաքանչյուր 20 մետրին մեկ հաստ: Ափի մոտ եղած սյունը կարճ էր լինում՝ 2,5 մ., գնալով սյունեղը երկարում էին, վերջինը հասնում էր 8,5 մետրի: Չնայած մետաղալարը լճի մեջ փռում էին 500 մ. երկարությամբ, սակայն սյուները դնում էին 950—450 մետրի վրա՝ նայած լճի խորությամբ: Սյուները կանգնեցնելուց հետո մետաղալարը բարձրացնում և զցում էին դրանց զլուխներին: Մետաղալարը սյուներին ամրացնում էին երկաթե ամրակներով: Որպեսզի սյուները ամուր լինեին, դրանց ծայրերը սրում էին, խփում հատակի մեջ, իսկ սյուների կողքի մասը հարթեցնում էին և այդ հարթեցված մասից կախում 20—25 կգ. ծանրություն: Դրանից բացի, յուրաքանչյուր սյան զլխից աջ ու ձախ, հակառակ ուղղություններով, զցում էին մետաղալար, որի երկու կողմի ծայրերից կախում էին 100—200 կգ. երկաթե ծանրոցներ: Այս աշխատանքների շնորհիվ սյուները ամրանում էին տեղում և հուսալի կերպով պահում իրենց վրա փոփած մետաղալարը:

Լճի մեջ փռած 500 մետրանոց մետաղալարի վերջին ծայրից 50 կամ 100 մետր ետ՝ դեպի ափը, փոփում էր 300 մ. երկարությամբ երկու այլ մետաղալարեր: Դա արվում էր կաթասանների կառուցման նպատակով: Եթե հիմնական մետաղալարը փոփում էր ուղղահայաց դիրքով, ապա մյուս երկուսը՝ հորիզոնական: Հիմնական մետաղալարից 16 մ. աջ ու ձախ, երկու կողմերից, դրվում էր մեկական սյուն, հաջորդ սյունը դրվում էր նույն կերպ, առաջին սյունից 10, երրորդը՝ երկրորդ սյունից 14 մ. հեռու³¹:

Գլխավոր մետաղալարի վրա 100—150 մ. դեպի ափը հետ քաշված դրվում էր զբլխավոր գերանը (վերահսկիչ գերան), որի խնդիրն էր պահել անշարժ ուղկանի հիմնականալը: Գերանից գերան զցվում էր մետաղալար և կախվում ծանրոցներ: Սրանից բացի, գերանների անկյուններից զցում էին լրացուցիչ ծանրոցներ: Գերանից գերան 9 մետր էր, այն պահելու համար ամրացնում էին գոտիներով (ջլամար): Անշարժ ուղկանի համար զցում էին վեց գոտի, որի շնորհիվ գերանները հուսալի ամրանում էին: Այնուհետև, ափից սկսած փոփում էին թողը, որի մի ծայրն իր ծանրոցներով իջնում էր գերանին, մյուս ծայրը կապվում էր զլխավոր փայտե խցանից³²:

Կաթասա մտած ձկներին հանելու համար դոնից մտնում են աջ ու ձախ կողմի 16 մետրանոց կաթասաները, որից դուր կա 10 մ. և այնուհետև 14 մ. կաթասաները: Առաջին կաթասայի ցանցը հավաքում են և մտնում երկրորդ կաթասան, որից հետո երրորդ կաթասայի պատն են արձակում և քաշում մինչև գերանը: Ձկների հավաքատեղին 14 մ. կաթասան է, որտեղից հանում են ձուկը և լցնում նավակը:

Անշարժ ուղկանով որսած ձուկը թարմ էր մնում, քանի որ կաթասան ջրում է և մինչև ձկների կաթասայից հանելն ու նավակ լցնելը կենդանի են լինում: Ձկնորսական սեզոնի ավարտից հետո հանում են թողը, սյուներն անջատում վերահսկիչ գերանից և իջեց-

չնայած Սևանա լճում այն կիրառվում է 1940-ական թթ. առ այսօր: Նյութը գրառված է Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի ձկնորսներից: Բանասցաններն այս որսաձևին տալիս են նևող աճումը: Սակայն դա ավելի քննադատական է զցովի ուղկանի համար: Մինչդեռ այս դեպքում նևողը չի քննադատում այս ինքնատիպ կառույցը: Հայերենում «նևող» բառի համար ուղկանից բացի այլ իմաստ չկա: Ուստի, թվում է, թե իսկապես կարելի է անվանել ուսական «նևող» բառով, որը, միշտ է, չի արտահայտում կառույցի իմաստը, սակայն Գեղարքունիքի բնակչության այսօրվա բանավոր խոսքում խիստ կիրառելի է: Այնուհետև, ձկնորսական այս եղանակին կարելի է տալ նաև անշարժ ուղկան անունը, որը ինչ-որ չափով մատնանշում է դրա էական առանձնահատկությունները սովորական զցովի կամ քաշովի ուղկանից: Այլ խոսքով՝ անշարժ ուղկան ասելով կարելի է հասկանալ այս կառույցը (նևող), իսկ զցովի ուղկանի դեպքում՝ ցանցավոր, սովորական ուղկանը:

³¹ Դրանով զլխավոր մետաղալարի երկու կողմերից ստեղծվում էին երեքական հատվածներ, որոնց տալիս են կաթասա աճումը: Դա խիստ քննադատական է այս որսաձևի համար: Հատվածներում բռնված ձկները ասես ղնկնում են կաթասայի մեջ, որից դուրս գալը եթե անհնարին չէ, ապա խիստ դժվար է:

³² Այս կառույցի համար օգտագործվում է սովորական ձկնորսական ցանցը, որը սակայն փայտախցաններ չունի: Եթե ձուկը բռնվում է դրվող ցանցի օղակներում, ապա այստեղ ձուկը մտնում է ցանցով պատված կաթասայի մեջ: Անշարժ ուղկանի համար անհրաժեշտ ցանցի մասերը հավաքում են դրում և պատրաստի վիճակում տեղադրում ջրի մեջ կառուցված հիմնականալքի վրա: Ծանցը հիմնականալքին են ամրացնում պարաններով:

նում ջրի հատակը³³: Հաջորդ տարվա ձկնորսական սեզոնին բարձրացնում են գլխավոր մետաղալարը և նորից կառուցում անշարժ ուղկանի հիմնակմախքը:

Սևանա լճում կիրառված վերոհիշյալ ձկնորսական եղանակներից 1920—1930-ական թթ. դեռևս բավական տարածված էին գցովի ուղկանները, լճային նետովող և դրվող ցանցերը: Մյուս ձկնորսական հնարներն ունեին սուկ օժանդակ ճշանակությունը:

Վերոհիշյալ նութերի ուսումնասիրությունը հիմք է տալիս Սևանա լճում կիրառված լճային ձկնորսական եղանակները դասակարգելու և հնարավորություն է ընձեռում հանգելու մի շարք եզրակացությունների.

1. Սևանի ավազանի բնակչությունը, մինչև Արևմտյան Հայաստանից և Պարսկահայքից վերաբնակվելը, անկասած, ծանոթ էր եռամսանու և Գիզակի օգնությամբ կատարվող ձրկնորսությանը: Ձկնորսական այս որսաձևերը հնագույներից լինելով՝ տարածված են եղել երկրագնդի բոլոր հատվածներում և որպես վերապրուկ կենցաղավարվել են մինչև մեր օրերը: Սևանա լճում այս որսաձևը առավել տարածված է եղել ավազանի ռուս աղանդավորների մեջ:

2. Լճի, ինչպես նաև գետի կեռը, հավանաբար, կարող էր ստեղծվել 1840—1850-ական թթ., որովհետև այդ շրջանում դեռևս անմատչելի էին ձկնորսության առավել բարդ եղանակները, բնականաբար, պետք է գործածական լինեին ձկնորսության պարզ հնարները, որոնք ձկների առատության պայմաններում միանգամայն կիրառելի էին ու արդյունավետ: Ա. Օվեշինի վկայությամբ ձկնորսական այս գործիքները ռուսական իրակառույցանը ծանոթ չեն եղել: Սևանի ավազանում դրանով ձուկ են որսացել հայերը:

3. 19-րդ դարի վերջերից և 20-րդ դարի սկզբներից Ռուսաստանից Սևանի ավազան թափանցեց ծիծեռը, որը լճի կետի համեմատ ավելի գործառնական էր ու արտադրողական: Սակայն, մինչև ծիծեռի մուտքը Սևանի ավազան, հայ բնակչությունն ուներ դրա պարզունակ տեսակը, հանձին լճի կեռի, որը կիրառվում էր չորս-հինգ տասնամյակից ավելի: Վերջինս դուրս մղվեց լճային ձկնորսության ոլորտից, փոխարինվելով ծիծեռով: Լճի կեռը բոլորովին մոռացության տրվեց:

4. Չանգն ու ակատիզ ցանցը պետք է համարել ավելի ուշ շրջանում, ստեղծված ձկնորսական աշխատանքային գործիք: Չանգը կիրառվել է մինչև 1930-ական թթ. և այսօր հիմնականում մոռացության է տրվել: Ակատիզ ցանցը Սևանա լճում կիրառված տարբեր տեսակի ցանցերի գործածության արգասիք պետք է համարել, որը լինելով յուրատեսակ մտահղացում, օգտագործվում էր դեռևս ոչ վաղ անցյալում:

5. Ըստ գրավոր վկայությունների, կարթավոր ուղկանը տարածվել է Սևանի ավազանում այնտեղ հաստատված զինվորականության կողմից: Այնուհետև ձկնորսական այս գործիքը կիրառվել է ավազանի բնակչության շրջանում: Այն իր կառուցվածքով խիստ նման է ինչպես Գեղարքունիքի, այնպես էլ Հայաստանի այլ ազգագրական շրջաններում լայն տարածում գտած թակարդին (տուզախ), որն օգտագործվում էր հատկապես կարպի որսի ծամանակ:

6. Գեղարքունիք վերաբնակեցված հայ բնակչությունը, մինչև նոր բնակավայրում հաստատվելը, ամենայն հավանականությամբ ծանոթ էր ուղկանային ձկնորսությանը: Հայերի օգտագործած ուղկաններն իրենց կառուցվածքով ու աշխատանքային եղանակներով նկատելիորեն զանազանվում են Սևանա լճի շրջանում բնակվող ռուս աղանդավորների ուղկաններից, որոնք հայտնի են «աստանայի ուղկաններ» անունով: Դա իր կառուցվածքով նման է ունենու ճյուղերից հյուսած գետային ձկնորսական թարփին:

7. Դրվող ցանցերը Սևանա լճում կիրառվում էին 19-րդ դարի երկրորդ կեսերից, իսկ անշարժ ուղկանները՝ մեր դարի 40-ական թթ.: Դրանք ցանցավոր ուղկանի հետ մեկտեղ համարվում են լճում կիրառված ձկնորսական եղանակներից ամենարդյունավետը: Դրվող ցանցեր գործելը և դրանով ձկնորսություն անելը Սևանի ավազանի հայ բնակչությունն ընդօրինակել է ռուս աղանդավորներից: Անշարժ ուղկանն իր հետաքրքիր կառուցվածքով նույնպես ավազան է անցել Ռուսաստանից:

А. С. ПЕТРОСЯН — Методы озерного рыболовства в Восточной Армении (19—20 вв.). — В основу статьи легли материалы, собранные автором во время полевых этнографических изысканий 1982—1985 гг. и почерпнутые из небогатых письменных источников. В работе делается попытка раскрыть также технологические, типологические и генетические аспекты озерного рыболовства.

³³ Որպեսզի ընդգծեն այս կառուցով որսած ձկների առավելությունը ցանցով որսածների նկատմամբ, ձկնորսները բերում են հետևյալ օրինակը. անշարժ ուղկանի ձուկն նման է թարմ մորթած գառի մսի համին, իսկ ցանցով բռնածը՝ տորպած ոչխարի մսին: (ԴԱՆ, տետր 3, Մարտունի):